Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
մայիսի 14-ի N 532 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԻ ՈՒ ԲՐԵՆԴԻԻ ՍՊԻՐՏԻ ԵՎ ԽԱՂՈՂԻ ՕՂՈՒ ԹՈՐՎԱԾՔԻ ՀՆԱՑՄԱՆ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն կարգով սահմանվում են հայկական կոնյակի ու բրենդիի սպիրտի (այսուհետ՝ սպիրտ) և խաղողի օղու թորվածքի (այսուհետ՝ թորվածք) հնացման ժամկետները, ռեժիմները և հնացմանը ներկայացվող հիմնական պահանջները։

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. Սպիրտը և թորվածքը հնացվում են այդ նպատակով նախատեսված տարածքներում՝ տեխնոլոգիական հրահանգով սահմանված պայմաններում։

3. Սպիրտը և թորվածքն արծնապատ կամ սպիրտի և թորվածքի հետ քիմիական ռեակցիայի մեջ չմտնող և զգայորոշման ցուցանիշների վրա ազդեցություն չթողնող այլ նյութից (այսուհետ՝ չեզոք նյութ) պատրաստված տարողություններում կաղնեփայտի առկայությամբ հնացվելու դեպքում՝ մեկ դեկալիտր հեղուկի հաշվով կաղնու փայտի տեսակարար մակերեսը պետք է կազմի 700-900 քառ. սմ։

4. Հնացման համար օգտագործվող՝ չեզոք նյութից պատրաստված տարողություններում սպիրտի կամ թորվածքի քանակը չպետք է գերազանցի ընդհանուր տարողության 98 տոկոսը։

5. Չեզոք նյութից պատրաստված տարողություններում սպիրտի և թորվածքի հնացման դեպքում սպիրտը և թորվածքը տարեկան երկու անգամ հարստացվում են թթվածնով՝ թթվածնի պարունակությունը դրանցում հասցնելով 15-18 մգ/լ-ի։

III. ՍՊԻՐՏԻ ԵՎ ԹՈՐՎԱԾՔԻ ՀՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6. Հայկական կոնյակների պատրաստման համար նախատեսված՝ հնացման ենթակա կոնյակի երիտասարդ սպիրտները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 954-Ն որոշմամբ հաստատված հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգով սահմանված անվտանգության, քիմիական և զգայորոշման ցուցանիշներին։

7. Հնացված սպիրտի կամ թորվածքի տարիքի հաշվարկը կատարվում է հնացումն սկսելու (կաղնեփայտի հետ շփման մեջ մտնելու) ամսվանից։ Հնացման դրվող յուրաքանչյուր խմբաքանակ համարակալվում է։ Հնացման տարաների վրա նշվում են խմբաքանակի համարը, հնացման դրվելու տարեթիվն ու ամիսը և տվյալ տարայում լցված հեղուկի քանակը։

8. Հնացված սպիրտը կամ թորվածքը կուպաժներում օգտագործվում է որպես տվյալ տարիքի սպիրտ կամ թորվածք, եթե հնացումն սկսելու ամսվանից անցել են համապատասխան տարիներ, կամ հնացումը կատարվել է համապատասխան տարիներից առավելագույնը երեք ամիս պակաս ժամկետում՝ բացառությամբ սույն կարգի 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերում նշված՝ նվազագույն ժամկետներում հնացված սպիրտի կամ թորվածքի։

9. Հայկական սովորական կոնյակների պատրաստման համար նախատեսված կոնյակի սպիրտները հնացվում են առնվազն երեք տարի։

10. Հայկական հասուն կոնյակների պատրաստման համար նախատեսված կոնյակի սպիրտների հետագա հնացումը շարունակվում է միայն կաղնեփայտյա տարողություններում։

11. Բրենդիների պատրաստման համար նախատեսված սպիրտները հնացվում են առնվազն երկու տարի։

12. Խաղողի հնացված օղիների պատրաստման համար նախատեսված խաղողի օղու թորվածքները հնացվում են առնվազն մեկ տարի։

13. Նախքան թորվածքը հնացման դնելը՝ թույլատրվում է այն նոսրացնել ջրով։

14. Հնացման ընթացքում հայկական կոնյակի սպիրտների գլուխլցման առնվազն 90 տոկոսը պետք է կազմեն նույն տարիքի սպիրտները։ Մնացած 10 տոկոսը կարող են կազմել ավելի երիտասարդ սպիրտները, որոնց տարիքը չպետք է պակաս լինի մեկ տարվանից՝ մինչև 6 տարի, 2 տարվանից՝ 6-10 տարի, 5 տարվանից՝ 10-25 տարի, և 7 տարվանից՝ 25-ից ավելի տարի հնացված սպիրտների տարիքից։

15. Հնացման ընթացքում բրենդիի սպիրտների գլուխլցման առնվազն 85 տոկոսը պետք է կազմեն նույն տարիքի սպիրտները։ Մնացած 15 տոկոսը կարող են կազմել ավելի երիտասարդ սպիրտները, որոնց տարիքը չպետք է պակաս լինի 2 տարվանից՝ մինչև 6 տարի, 3 տարվանից՝ 6-10 տարի, 5 տարվանից՝ 10-25 տարի, և 7 տարվանից՝ 25-ից ավելի տարի հնացված սպիրտների տարիքից։

16. Հնացման ընթացքում խաղողի օղու թորվածքի գլուխլցման առնվազն 80 տոկոսը պետք է կազմեն նույն տարիքի թորվածքները։ Մնացած 20 տոկոսը կարող են կազմել ավելի երիտասարդ թորվածքները, որոնց տարիքը չպետք է պակաս լինի մեկ տարվանից՝ մինչև 3 տարի, 2 տարվանից՝ 3-6 տարի, 3 տարվանից՝ 6-10 տարի, և 5 տարվանից՝ 10-ից ավելի տարի հնացված թորվածքների տարիքից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ